

Աշխարհագրություն

УДК 556.512

Բ. Պ. ՄԱՅԱԿԱՆՅԱՆ, Լ. Ա. ԾԻԼԻՆԳԱՐՅԱՆ, Կ. Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ, Բ. Գ. ԶԱԶԱՐՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՏԱՅԻՆ ՀՈՍՔԻ ԶՐԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐՆ
ԸՍՏ ԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ**

Ներածություն: Զրային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և կառավարման նպատակով ՀՀ տարածքում առանձնացվել են հինգ ավազանային կառավարման տարածքներ (ԱԿՏ)՝ Հյուսիսային, Ախուրյանի, Սևան-Հրազդանի, Արարատյան և Հարավային, որոնք միմյանցից տարբերվում են իրենց տարածքային, երկրաբանական, կլիմայական, ջրաբանական և այլ պայմաններով:

Ավազանային կառավարման տարածքների ջրաբանական բնութագիրը: Հյուսիսային ավազանային կառավարման տարածքն զբաղեցնում է Կուրի ավազանին պատկանող գետերի ջրհավաք ավազանները (7185 կմ²): Տարածքը ունի լեռնային բարդ երկրաբանական կառուցվածք ու բազմաբնույթ ռելիեֆ, որտեղ հիմնականում տարածված են ջրամերժ ապարները (բացառություն է կազմում Զորագետի վերին և միջին հոսանքների մի զգալի մասը, ուր տիրապետում են նեոգենի և չորրորդականի խիստ ծակոտկեն ու ճեղքավորված հրաբխային ապարները):

Այս տարածքի ջրհավաք ավազաններին ամբողջ տարին բնորոշ է համեմատաբար մեղմ և խոնավ կլիմա, որի պատճառով տարածքի զգալի մասը անտառածածկ է: Այստեղ ջրագրական ցանցը բաղկացած է 2388 գետերից և գետակներից, որոնց ընդհանուր երկարությունը կազմում է 5913 կմ (աղյ. 1, 2): Այստեղ 100 կմ²-ից ավելի երկարություն ունի միայն Դեբեդ գետը, (ՀՀ սահմաններում Փամբակ գետի հետ միասին կազմում է 152 կմ): Տարածքի գետային ցանցի խտության գործակցի միջին արժեքը 0,82 կմ/կմ² է:

Ախուրյանի ավազանային կառավարման տարածքի զգալի մասն զբաղեցնում են Շիրակի և Աշոցքի գոգավորությունները և Արարատյան գոգավորության մի մասը: Այստեղ գերակշռում են հրաբխածին խիստ ծակոտկեն ջրաթափանց ապարները, չորրորդականի լճային և գետային նստվածքները, որի պատճառով թափված տեղումների մեծ մասը ներծծվելով՝ ձևավորում է ստորերկրյա խորքային հոսք: Այս տարածքում լավ արտահայտված է կլիմայական և հողաբուսական վերընթաց գոտիականությունը:

Ախուրյանի ԱԿՏ-ն ընդգրկում է Ախուրյան և Մեծամոր (առանց Քասաղ գետի) գետերի ջրհավաք ավազանները: Այստեղ գետային ցանցը կազմված է

338 գետերից ու գետակներից, որոնց գումարային երկարությունը 2374 կմ է (հանրապետության տարածքի բոլոր գետերի երկարության 10,5%-ը): Միայն մեկ գետ՝ Ախուրյանը, ունի 100 կմ-ից ավելի երկարություն (186 կմ): Այս ԱԿՏ-ն ունի գետային ցանցի խտության գործակցի ամենափոքր արժեքը՝ 0,47 կմ/կմ²:

Աղյուսակ 1

ՀՀ գետային ցանցի ընդհանրացված ցուցանիշներն ըստ ավազանային կառավարման տարածքների

Գետերը ըստ մեծության	Գետերի քանակը (վերևում) և երկարությունը (ներքևում), կմ					
	Հյուսիսային	Ախուրյանի	Սևան-Հրազդանի	Արարատյան	Հարավային	Ընդհանուրը
ամենափոքրերը (10 կմ-ից փոքր)	<u>2304</u> 4200	<u>290</u> 1082	<u>1419</u> 2817	<u>2180</u> 3330	<u>2907</u> 4188	<u>9100</u> 15617
10-25 կմ	<u>68</u> 928	<u>33</u> 551	<u>97</u> 1463	<u>50</u> 757	<u>70</u> 982	<u>318</u> 4681
25-50 կմ	<u>10</u> 304	<u>12</u> 402	<u>11</u> 350	<u>6</u> 221	<u>6</u> 183	<u>45</u> 1460
50-100 կմ	<u>5</u> 329	<u>2</u> 153	<u>2</u> 140	<u>2</u> 148	<u>1</u> 56	<u>12</u> 826
100 կմ և ավելի	<u>1</u> 152	<u>1</u> 186	<u>1</u> 141	-	<u>1</u> 119	<u>4</u> 598
Ամբողջ գետային ցանցը	<u>2388</u> 5913	<u>338</u> 2374	<u>1530</u> 4911	<u>2238</u> 4456	<u>2985</u> 5528	<u>9479</u> 23182
Գետային ավազանների մակերեսը, կմ ²	7185	5024	7545	4256	4481	28491
Գետային ցանցի խտության գործակիցը, կմ/կմ ²	0,82	0,47	0,65	1,05	1,23	0,81

Սևան-Հրազդան ավազանային կառավարման տարածքն իր զբաղեցրած մակերեսով ամենամեծն է (8790 կմ²): Այն զբաղեցնում է Սևանա լճի, ինչպես նաև Քասաղ ու Հրազդան գետերի ջրհավաք ավազանները: Այս տարածքում երկրաբանական և ջրատրոփարանական կառուցվածքի տեսակետից միմյանց են հաջորդում հրաբխածին խիստ ծակոտկեն ջրաթափանց ապարները (Արագած լեռնազանգվածի արևելյան լանջերը, Գեղամա և Վարդենիս լեռնավահանների մեծ մասը) և հին նստվածքային, հրաբխանստվածքային ու ներծայթքումային ջրամերժ ապարները (Փոքր Կովկասի ներքին շարի լեռնաշղթաներում): Թեև կլիմայական պայմանները խիստ բազմազան են, այնուամենայնիվ որոշակի է նրա վերընթաց գոտիականությունը: Հողաբուսական ծածկույթը նույնպես բաշխվում է վերընթաց գոտիականությամբ:

Սևան-Հրազդանի ԱԿՏ-ում, Հրազդան և Քասախ գետերի ջրհավաք ավազաններում հաշվում են 1530 գետ և գետակ (հանրապետության տարածքի բոլոր գետերի 16,1%-ը), որոնց գումարային երկարությունը 4911 կմ է (հանրապետության բոլոր գետերի գումարային երկարության 21,2%-ը): Գետային ցանցի խտության գործակցի միջին արժեքը առանց Սևանա լճի մակերեսի կազմում է 0,65 կմ/կմ², իսկ վերջինիս հետ՝ 0,56 կմ/կմ²:

Արարատյան ԱԿՏ-ն աչքի է ընկնում ռելիեֆի խիստ կտրտվածությամբ, որտեղ հիմնականում տարածված են հին նստվածքային, հրաբխանստվածքային և ներծայթքումային ջրամերժ ապարները: Այստեղ մակերևութային և

ստորերկրյա հոսքերը գրեթե հավասար են: Կլիման Արարատյան դաշտում և Վայքի ցածրադիր շրջաններում բարեխառն ցամաքային է, որը լեռների մերձգագաթային շրջաններում փոխվում է վերընթաց գոտիականության: Լավ արտահայտված վերընթաց գոտիականությամբ է բաշխվում նաև հողաբուսական ծածկույթը: Այս ԱԿՏ-ում գետային ցանցը կազմված է 2238 գետերից և գետակներից (ՀՀ բոլոր գետերի 23,6%-ը), որոնց գումարային երկարությունը 4456 կմ է (ՀՀ բոլոր գետերի երկարության 19,2%-ը): Գետային ցանցի խտության գործակիցը 1,05 կմ/կմ² է:

Աղյուսակ 2

ՀՀ գետային ավազանների տեղաբաշխումն ըստ ավազանային կառավարման տարածքների

Ավազանային կառավարման տարածքներ, գետային ավազաններ	Ջրադեցրած մակերեսը, կմ ²
1. Հյուսիսային. ընդգրկում է Դեբեդ (3895 կմ ²), Աղսև (2480 կմ ²) գետերի և Կուրի փոքր վտակների (810 կմ ²) ջրավաք ավազանները:	7185
2. Ախուրյանի. ընդգրկում է Ախուրյան (2784 կմ ²), Մեծամոր (առանց Քասախի) և Մաստարայի հեղեղատ (2060 կմ ²), Ախուրյանի ու Մեծամորի գետաբերանների միջև ընկած անհոսք ավազանի մակերեսը (185 կմ ²):	5029
3. Սևան-Հրազդանի. ընդգրկում է Սևանա լիճը և ջրավաք ավազանը (4750 կմ ²), Հրազդան (2560 կմ ²) և Քասախ (1480 կմ ²) գետերի ջրավաք ավազանները:	8790
4. Արարատյան. ընդգրկում է Ազատ (572 կմ ²), Վեդի (633 կմ ²), Արփա (2080 կմ ²), գետերի և նրանց միջև գտնվող փոքր գետերի ջրավաք ավազանները (971 կմ ²):	4256
5. Հարավային. ընդգրկում է Որոտան (2176 կմ ²), Ողջի (884 կմ ²), Ծավ (457 կմ ²), Մեղրի (336 կմ ²) գետերի և Հազարի գետի աջակողմյան փոքր վտակների (300 կմ ²) ու Արաքս թափվող փոքր գետերի ջրավաք ավազանները (328 կմ ²):	4481
Ընդամենը	29741

Հարավային ԱԿՏ-ի մեջ մտնում են Որոտան, Ողջի, Մեղրի և Արաքսի ավազանին պատկանող փոքր գետերի ջրավաք ավազանները: Տարածքում գերակշռում են առավելապես հին նստվածքային, հրաբխանստվածքային և ներժայթքումային ջրամերժ ապարները, թեև այդ շրջանի որոշ հատվածներ նույնպես ունեն հրաբխային ծագում, ինչպես օրինակ՝ Որոտան գետի ձախափնյա հատվածը (Սյունիքի հրաբխային բարձրավանդակի մի մասը): Այստեղ կլիմայական պայմաններն աչքի են ընկնում խիստ բազմազանությամբ, որի պատճառով ձևավորվում են չոր մերձարևադարձային կլիմայական տիպից մինչև ցուրտ լեռնային կլիմայի տիպերը: Համեմատաբար խոնավ կլիմայի հետևանքով տարածքի մի զգալի մասը անտառածածկ է: Այստեղ կան 2985 գետեր և գետակներ (հանրապետության տարածքի բոլոր գետերի 31,5%-ը), որոնց գումարային երկարությունը 5528 կմ է (ՀՀ բոլոր գետերի ընդհանուր երկարության 23,8%-ը): Այս ԱԿՏ-ի գետային ցանցի խտության գործակիցը ամենամեծն է, որը կազմում է 1,23 կմ/կմ²:

Ինչպես նշեցինք, յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածք կազմված է մի քանի համեմատաբար խոշոր գետային ավազաններից: Ստորև (աղյ. 3) բերվում են ջրավազանային կառավարման տարածքների հիմքը կազմող գետերի որոշ ջրաբանական բնութագրիչներ:

Թեև Հյուսիսային ավազանային կառավարման տարածքն իր զբաղեցրած մակերեսով (7185 կմ², որը կազմում է հանրապետության տարածքի շուրջ 24%-ը) զիջում է Սևան-Հրազդան ԱԿՏ-ին (8790 կմ², որը կազմում է հանրապետության տարածքի 29,6%-ը), սակայն այստեղ ձևավորվում է հանրապետությունում առաջացող գետային հոսքի շուրջ 27%-ը (հաշվի առած Սևանա լճի ակտիվ ջրատվությունը): Այստեղ հոսքի մոդուլի արժեքը (8,14 լ/վ·կմ²) գերազանցում է հանրապետության տարածքի հոսքի մոդուլի միջին արժեքը (տես աղյ. 4):

Աղյուսակ 3

Ավազանային կառավարման տարածքների համեմատաբար խոշոր գետերի հիմնական ջրաբանական բնութագրեր

Գետ	Ջրհավաք ավազանի մակերեսը, կմ ²	Գետի հոսքի բնութագրերը				Հոսքի գործակիցը
		ծախսը, մ ³ /վ	մոդուլը, լ/վ·կմ ²	ծավալը, մլն·մ ³	շերտը, մմ	
Դեբեդ՝ ՀՀ սահմաններում	3895	38,1	9,79	1203	309	0,44
Աղստև՝ ՀՀ սահմաններում	2173	14,1	6,49	445	205	0,32
Ախուրյան՝ ՀՀ սահմաններում	2784	12,4	4,45	391	241	0,24
Մեծամոր	3545	33,0	9,30	1040	292	0,57
Քասախ	1480	10,4	7,04	329	222	0,34
Հրազդան	2560	23,2	9,07	733	286	0,47
Մասրիկ	685	4,09	6,00	129	188	0,31
Արզիճի	384	5,48	14,3	173	450	0,69
Գավառագետ	480	3,74	7,79	118	246	0,31
Ազատ	572	6,91	12,1	218	381	0,60
Վեղի	633	2,76	4,35	87	136	0,24
Արփա՝ ՀՀ սահմաններում	2081	23,2	11,1	731	357	0,49
Որոտան՝ ՀՀ սահմաններում	2176	22,3	10,2	703	323	0,44
Ողջի՝ ՀՀ սահմաններում	880	13,5	15,3	426	486	0,59
Մեղրի	342	3,61	10,6	114	333	0,47

Սևան-Հրազդան ԱԿՏ-ում կազմավորվում է հանրապետության տարածքում ձևավորված գետային հոսքի շուրջ 19,6%-ը: Անհրաժեշտ է նշել, որ այստեղ ձևավորված գետային հոսքի մի զգալի մասը թափվելով Սևանա լիճ, գոլորշանում է, ուստի նրա մեջ թափվող 847 մլն·մ³ հոսքի միայն 265 մլն·մ³-ը (լճի ակտիվ ջրատվության միջին արժեքը ժամանակակից մակարդակի պայմաններում) հանրապետության համար կարելի է ընդունել որպես ռեսուրս:

ԱԿՏ-ների մեջ առավել ջրառատ է Հարավայինը, որի տարածքը թեև զբաղեցնում է հանրապետության տարածքի միայն 15,1%-ը, սակայն այստեղ գետային հոսքը կազմում է հանրապետության տարածքում ձևավորվող գետային հոսքի շուրջ 20,6%-ը: Հենց այստեղ էլ նկատվում է հոսքի մոդուլի ամենաբարձր արժեքը՝ 9,86 լ/վ·կմ²:

Ախուրյանի ավազանային տարածքում, որը կազմում է հանրապետության տարածքի մոտ 17%-ը, ձևավորվում է ամբողջ գետային հոսքի 16,3%-ը:

Արարատյան ԱԿՏ-ում, որի տարածքը ամենափոքրն է (հանրապետության տարածքի 14,3%-ը), ձևավորվում է ամբողջ հոսքի 16,3%-ը: Այստեղ հոսքի մոդուլի արժեքը իր մեծությամբ ($8,25 \text{ լ/վ}\cdot\text{կմ}^2$) երկրորդն է Հարավայինից հետո:

Հյուսիսային ավազանային կառավարման տարածքում ձևավորված $58,5 \text{ մ}^3/\text{վ}$ հոսքից $36,0 \text{ մ}^3/\text{վ}$ -ը (կամ ամբողջ հոսքի 61,5%-ը) կազմում է գետերի մակերևութային հոսքը: Մակերևութային հոսքի մեծ արժեքը պայմանավորված է այստեղ գրեթե ամենուրեք տարածված (բացառությամբ Չորագետի վերին հոսանքների շրջանի) ջրամերժ ապարներով, որի հետևանքով թափված տեղումների զգալի մասը առաջացնում է մակերևութային հոսք: Այս տարածքի գետերի հոսքի գործակցի միջին արժեքը կազմում է 0,39 (աղ. 4), որը միայն մեծ է Սևան-Հրազդան ջրավազանային կառավարման տարածքի նույն գործակցից: Հոսքի գործակցի համեմատաբար փոքր արժեքը հիմնականում կապված է անտառածածկույթի հետ, որտեղ թափվող տեղումների մի զգալի մասը պահվում է ծառերի տերևների, ճյուղերի և բների կողմից և առանց գետնին հասնելու գոլորշանում, իսկ որոշ մասն էլ գոլորշանում է բուսածածկից կատարվող տրանսպիրացիայի հետևանքով:

Աղյուսակ 4

Գետերի հոսքի բնութագրիչներն ըստ ավազանային կառավարման տարածքների


Ավազանային կառավարման տարածքները	Մակերեսը, կմ^2	Գետի ծախսը, $\text{մ}^3/\text{վ}$			Հոսքի		
		միջինը	մակերես-վորային	ստորերկրյա	մոդուլը, $\text{լ/վ}\cdot\text{կմ}^2$	շերտը, մմ	գործակիցը
Հյուսիսային	7185	58,5	36,0	22,5	8,14	257	0,39
Ախուրյանի	5029	34,9	7,8	27,1	6,94	219	0,43
Սևան-Հրազդանի*	8790	44,7	27,1	17,6	5,08	160	0,26
	7536	60,4	17,6	42,8	6,87	217	0,37
Արարատյան	4256	35,1	16,8	18,3	8,25	260	0,42
Հարավային	4481	44,2	24,3	19,9	9,86	311	0,44
Ընդամենը	29741	217,4	112,0	105,4	7,31	231	0,37
	28491	233,1	102,5	130,6	7,84	247	0,40

* Վերևում՝ Սևանա լճի ակտիվ ջրատվությամբ (ժամանակակից մակարդակով), ներքևում՝ Սևանա լիճ թափվող գետերի հոսքի հետ միասին:

Ախուրյանի ավազանային կառավարման տարածքում հոսքի գործակցի համեմատաբար մեծ արժեքը (0,43) պայմանավորված է կից ավազաններից այստեղ խորքային ճանապարհով բեռնաթափվող ստորերկրյա ջրերով: Հիմնականում այդ է պատճառը, որ այստեղ ձևավորվող գետային հոսքի միայն 22,3%-ն է ձևավորվում մակերևութային ջրերի հաշվին:

Ավազանային կառավարման 5 տարածքների մեջ հոսքի գործակցի ամենափոքր արժեքը Սևան-Հրազդանի տարածքինն է, որը Սևանա լճի ակտիվ ջրատվության միջին արժեքի հետ կազմում է ընդամենը 0,26, իսկ առանց դրա՝ 0,37: Հոսքի գործակցի այդպիսի փոքր արժեքը պայմանավորված է նախ նրանով, որ Սևանա լիճ թափվող $847 \text{ մլն}\cdot\text{մ}^3$ գետային հոսքի մի զգալի մասը գոլորշանում է լճի հայելու մակերևութից: Ապա՝ այստեղ մեծ տարածում ունեցող հրաբխային ապարները խիստ ծակոտկեն և ճեղքավոր-

ված են, ուստի թափված տեղումների մի զգալի մասը ներծծվելով՝ ձևավորում է ստորերկրյա խորքային հոսքը, որի մեծ մասը բեռնաթափվում է այլ գետային ավազաններում [1, 2]:



Նկ. 1: Ջրային հաշվեկշիռը ավազանային կառավարման տարածքներում. 1 - Հյուսիսային, 2 - Ախուրյանի, 3 - Սևան-Հրազդանի (Ա - Սևանա լճի ակտիվ ջրատվությամբ, Բ - առանց Սևանա լճի ակտիվ ջրատվության), 4 - Արարատյան, 5 - Հարավային:

Արարատյան ԱԿՏ-ում հոսքի գործակիցը 0,42 է, որը փոքր-ինչ մեծ է հանրապետության միջինից: Այստեղ գետերի հոսքի ստորերկրյա բաղադրիչը (52%) գերազանցում է մակերևութային հոսքը, ինչը պայմանավորված է Սևանա լճի ջրհավաք ավազանից ստորերկրյա խորքային ճանապարհով շուրջ 80 մլն-մ³ ջրերի բեռնաթափումով Ագատ և Եղեգիս գետերի ջրհավաք ավազաններում [1]:

Հոսքի գործակցի առավելագույն արժեք դիտվում է Հարավային ԱԿՏ-ում (0,44), որը պայմանավորված է մի կողմից՝ Մյունիքի հրաբխային բարձրավանդակից այստեղ բեռնաթափվող ստորերկրյա ջրերի, իսկ մյուս կողմից՝ ծալքաբեկորային լեռների ջրամերժ ապարների առկայությամբ: Այս տարածքում տեղումների զգալի մասը ձևավորվում է որպես մակերևութային հոսք (ամբողջի 55%-ը):

Հյուսիսային ԱԿՏ-ում գումարային գոլորշացումը կազմում է մթնոլորտային տեղումների 58,6%-ը (հանրապետության տարածքից կատարվող գոլորշացման 25,7%-ը), գետային հոսքը՝ 38,5%-ը, իսկ խորքային հոսքը՝ 2,9%-ը (նկ. 1):

Ախուրյանի ԱԿՏ-ում գումարային գոլորշացումը զգալի կերպով մեծ է (64,9%), քան Հյուսիսայինում (հանրապետության տարածքից կատարվող գոլորշացման 15,2%-ը), սակայն մեծ է նաև գետային հոսքի մասնաբաժինը (43,1%), որը, ինչպես նշեցինք, խորքային ճանապարհով բեռնաթափվող ստորերկրյա ջրերի շնորհիվ է, որի պատճառով այստեղ ջրային հաշվեկշիռը բացասական է (խորքային ներհոսքը կազմում է 204 մլ/մ³):

Սևան-Հրազդանի ԱԿՏ-ում Սևանա լճից տեղի ունեցող գոլորշացման պատճառով գումարային գոլորշացման արժեքը բոլոր ԱԿՏ-ների համեմատ ամենամեծն է, որը կազմում է մթնոլորտային տեղումների 67,4%-ը (հանրապետության տարածքից կատարվող գոլորշացման 32,2%-ը):

Սևանա լճի ակտիվ ջրատվությունը հաշվի առնելու դեպքում գետային հոսքը կազմում է մթնոլորտային տեղումների 27%-ը, իսկ խորքայինը՝ 5,6%-ը: Առանց լճի ակտիվ ջրատվության, այսինքն՝ Սևանա լիճ թափվող գետերի հոսքի հետ միասին գետային ամբողջ հոսքը կազմում է թափված մթնոլորտային տեղումների 36,5%-ը: Խորքային ճանապարհով այստեղ բեռնաթափվող հոսքը կազմում է մթնոլորտային տեղումների 7,5%-ը: Արարատյան ԱԿՏ-ում գումարային գոլորշացումը կազմում է մթնոլորտային տեղումների 53,3%-ը (հանրապետության տարածքից կատարվող գոլորշացման 12,8%-ը) և զգալի կերպով զիջում է ինչպես Ախուրյանի, այնպես էլ Սևան-Հրազդանի ԱԿՏ-ի գումարային գոլորշացմանը, սակայն գետային հոսքը կազմում է 42%, որը գերազանցում է ինչպես Հյուսիսային, այնպես էլ Սևան-Հրազդանի ԱԿՏ-ի գետային հոսքի մասնաբաժինները և գրեթե հավասար է Ախուրյանի ԱԿՏ-ի գետային հոսքին: Խորքային հոսքը կազմում է մթնոլորտային տեղումների 4,7% -ը:

Հարավային ԱԿՏ-ում գումարային գոլորշացումը կազմում է թափվող մթնոլորտային տեղումների ընդամենը 48,3%-ը (հանրապետության տարածքից կատարվող գոլորշացման 14,6%-ը), զգալի կերպով զիջելով մյուս ԱԿՏ-ներից տեղի ունեցող գումարային գոլորշացմանը: Գետային հոսքը կազմում է մթնոլորտային տեղումների 43,6%-ը:

Մթնոլորտային տեղումների մի զգալի մասը ներծծվելով, ձևավորում է 258 մլ/մ³ խորքային հոսք, որը կազմում է այստեղ թափված տեղումների 8,1%-ը:

Եզրակացություն: Այսպիսով, նոր ձևավորված ավազանային կառավարման տարածքները միմյանցից տարբերվում են ոչ միայն ռելիեֆի առանձնահատկություններով, երկրաբանական ու ջրաերկրաբանական, կլիմայական, հողաբուսական ծածկույթի պայմաններով ու տարածքների ընդգրկու-

մով (մեծությամբ), այլ նաև հոսքի ձևավորման և նրա տարածաժամանակային բաշխման ընդգծված յուրահատկություններով:

ԵՊՀ, ՀՀԶՀՀԻ, Հայպետհիդրոմետ

Ստացվել է 26.05.2006

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Մնացականյան Բ.Պ. Հայաստանի ջրային հաշվեկշիռը: Եր., Ձանգակ-97, 2005:
2. Չիլինգարյան Լ.Ա., Մնացականյան Բ.Պ., Աղաբաբյան, Կ.Ա. Թորմաջյան Հ.Վ. Հայաստանի գետերի և լճերի ջրագրությունը: Եր., Ագրոպրես, 2002:

Б. П. МНАЦАКАНЯН, Л. А. ЧИЛИНГАРЯН, К. А. АГАБАБЯН, Б. Г. ЗАКАРЯН

ХАРАКТЕРИСТИКИ РЕЧНОГО СТОКА АРМЕНИИ ПО РАЙОНАМ БАСЕЙНОВОГО УПРАВЛЕНИЯ

Резюме

В статье приводятся характеристики речного стока Армении по вновь созданным районам бассейнового управления, показатели водного баланса, сравнительное описание гидрологических, гидрографических, климатических и других особенностей территории этих районов.

B. P. MNATSAKANYAN, L. A. CHILINGARYAN, K. A. AGHABABYAN, B. G. ZAKARYAN

DESCRIPTION OF RIVER FLOW OF ARMENIA ALONG REGIONS OF BASIN MANAGEMENT

Summary

In the article descriptions of river flow of Armenia are given, which are created again along basin management, as well as activities of water balance, comparative description of hydrological, climatic peculiarities of these regions.